

Մայրլ է. Սթոուն (Երուսաղեմ)
Իսրայելի գիտությունների ակադեմիայի անդամ
Խաչիկ Ա. Հարությունյան
Բանասիր. գիտ. թեկնածու

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մաս երրորդ: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (Ս.
Հեղինեի եկեղեցի)*

Բանալի բառեր – Երուսաղեմ, քրիստոնեություն, սրբատեղիներ, վանքեր, ուխտավորներ, ձեռագիր, գրիչ, վիմագիր, քերթագրեր, հիշատակարան:

Մուտք

Ս. Հարության տաճարի հնամենի և գողտրիկ շինություններից է հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը գտնվում է տաճարի արևելյան մասում՝ «Հանդերձից բաժանման խորան» անունը կրող փոքրիկ մատուռից ընդամենը մի քանի քայլ հեռավորության վրա, որտեղից կամարակապ նեղլիկ մուտքից սկիզբ առնող և աստիճանաբար լայնացող սանդուղքներն իջնում են դեպի եկեղեցու ընդարձակ սրահը:

Ավանդության համաձայն՝ Դ դարի առաջին կեսին սրբատեղին հայտնաբերել և հիմնադրել է Կոստանդիանոս կայսեր մայրը սուրբ Հեղինե թագուհին՝ տեղում Սուրբ Խաչի գյուտից անմիջապես հետո: Այս հանգամանքով է պայմանավորված մինչ օրս օտարների կողմից եկեղեցուն տրվող Ս. Հեղինե անվանումը: Հայոց մեջ եկեղեցին հայտնի է ս. Գրիգոր Լուսավորչի անունով: Երուսաղեմի պատմությանը քաջագիտակ և տեղի հայոց սրբատեղիների նորոգման գործում իր անուրանալի վաստակով հայտնի – Հովհաննես Հաննա վարդապետն էլ հավանական է համարում, որ սրբատեղին նախապես կրել է Ս. Խաչ անվանումը ի նշանավորումն ս. Խաչի

* Հոդվածի առաջին մասը տես «Վեմ», Եր., 2020, N 2, էջ 159-177, իսկ երկրորդ մասը՝ N 3, էջ 219-245: Ընդունվել է տպագրության 24.12.2020:


գյուտի, իսկ սրբավայրի անվանափոխությունը ս. Գրիգոր Լուսավորչի անունով, ըստ նրա՝ պայմանավորված է եղել այն ավանդույթով, համաձայն որի ս. Գրիգորը, գալով Երուսաղեմ, 7 տարի ձգնել է այս նույն վայրում¹:

Հարկ է ընդգծել, որ եկեղեցին իր ներկայիս տեսքով առավելապես Խաչակրաց շրջանի (ԺԱ-ԺԲ դդ.) կառույց է՝ հետագա մի շարք փոփոխություններով: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ունի երկու խորան. ավագ խորանն ընծայված է Լուսավորչին, որից աջ Հովհաննես Մկրտչի փոքրիկ խորանն է: Ըստ հայկական ավանդության՝ այդ խորանի ներքո ամփոփված են ս. Հովհաննեսի մասունքներից, որոնք Երուսաղեմ այցելության ժամանակ իր հետ բերել և այդտեղ ամփոփել է Գրիգոր Լուսավորիչը (տե՛ս նկ. 1, հ^մ 1 և 2):

Ս. Հովհաննես Մկրտչի խորանից փոքր-ինչ աջ նկատելի է մետաղյա ցանցկեն մի սևաներկ դուռ, որը սովորաբար փակ է ընդհանուր այցելությունների համար: Դռան ետևում ժայռափոր նեղլիկ միջանցքը տանում է դեպի նույն եկեղեցու խորանների ետնամաս, ուր փոքրիկ սրահը վերածված է պատարագամատույց փոքրիկ սեղանով մի մատուռի՝ նվիրված ս. Վարդան Մամիկոնյանին և հայոց նահատակներին (տե՛ս նկ. 1, հ^մ 4): Նկատենք, որ եկեղեցու ետնամասում գտնվող այս հատվածը բացվել է 1960-1980-ական թթ. ընթացքում Ս. Հարության տաճարում տեղի ունեցած ընդհանուր պեղումների և վերականգնողական աշխատանքների շրջանակներում: Հայ եկեղեցուն պատկանող այս հատվածում բուն պեղումները մեկնարկել են 1970 թ. և տևել մոտ մեկ տասնամյակ: Կատարված հնագիտական աշխատանքների արդյունքում բացահայտվել են ուշագրավ մանրամասներ՝ նախաքրիստոնեական շրջանի տարաբնույթ կառույցների հիմքեր, քրիստոնեական շրջանի տարբեր շերտեր, խաչակրաց նորոգությունների և շինությունների հատվածներ, Ս. Հարության տաճարի պատմությանն առնչվող այլ հետաքրքիր իրողություններ, որոնց մանրամասն անդրադարձը մեզ կշեղեր սույն հոդվածի նպատակներից²:

1 [Յովհաննես Հաննայ վրդ.], Գիրք պատմութեան սրբոյ եւ մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս եւ սրբոց տնօրինականաց տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Կ. Պոլիս, հրատ. «Յովհաննէսի եւ Պօղոսի», 1782, էջ 192: Աղանունի Ս. եպս., Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ. ուսումնասիրութիւններ, Երուսաղէմ, «Սրբոց Յակոբեանց» հրատ., 1931, էջ 340-347:

2 Այս հատվածում կատարված հնագիտական պեղումների և դրանց արդյունքում արձանագրված փաստերի ու գտածոների վերաբերյալ կա բավական հարուստ գրականություն, տե՛ս, օրինակ, Corbo V. C., Il Santo Sepolcro di Gerusalemme: Aspetti archeologici dalle origini al periodo crociato, parte 1 (testo), Franciscan Printing Press, Jerusalem, 1981, pp. 111-113, Broshi M., and Barkay G., Excavations in the Chapel of St. Vartan in the Holy Sepulchre, "Israel Exploration Journal", vol. 35 no 2/3, Jerusalem, 1985, pp. 108-128 և այլն: Հնագիտական աշխատանքների վերաբերյալ համառոտ տեսություն է հետևյալ հոդվածը. J. Patrich, An Overview on the Archaeological Work in the Church of the Holy Sepulchre, in D. Vieweger, Sh. Gibson (eds.), History of the Church of the Redeemer and the Muristan in Jerusalem, (Collection of Essay from a Workshop on the Church of the Redeemer and its Vicinity, held on 8th/9th September, 2014 in Jerusalem), Oxford, Archaeopress, 2016, pp. 139-161. Տե՛ս նաև հաջորդ ծնթ.:



Նկ. 1. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հատակագիծը: 1. Լուսավորչին ընծայված ավագ խորանը, 2. Ս. Հովհաննես Մկրտչի խորանը, 3. սրահի չորս սյուներից մեկը՝ առատ արձանագրություններով, 4. Ս. Վարդան մատուռը, 5. Գյուտ Խաչի մատուռը³

Բոլոր գտածոների մեջ, սակայն, ամենից առեղծվածայինը, թերևս, մնում է Բ դարի առաջին տասնամյակներով թվագրվող գծանկարված փոքրիկ նավակը՝ լատիներեն մակագրությամբ, որն այսօր էլ կարելի է տեսնել Ս. Վարդան մատուռի ներսում՝ մոտ 2մ բարձրություն ունեցող հարավակողմյան պատի վրա (նկ. 2)⁴:



Նկ. 2. լատիներեն մակագրությամբ նավակը՝ Ս. Վարդան մատուռում (լսնկ. հեղինակի, 2019 թ., օգոստոս)

3 Հատակագիծը քաղել, փոփոխություններով գծագրել ենք՝ նկատի ունենալ հետևյալ աշխատությունը և դրանում հրապարակված հատակագծերը՝ հմմտ. Kelly J. L., The Church of the Holy Sepulchre in Text and Archaeology, Archaeopress, 2019, p. 39 (հմմտ. պատկեր 3.1):

4 Նավակի, նրան առնչվող գրականության համար մանրամասն տեսնել Kelly J. L., նշվ. աշխ., էջ 53-55. Լատիներեն "DO MINEIVIMVS" մակագրությունը վերծանվում է "Domine ivimus", որ թարգմանաբար նշանակում է «Տէր, եկանք/ժամանեցինք»: Տես նույն տեղում, էջ 53:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ընդարձակ սրահում աչքի են ընկնում կամարակապ մարմարյա չորս խոշոր սյուները, որոնց մույթերն անանձնանում են բուսական գեղեցիկ զարդաքանդակներով ու նախշազարդերով: Նշյալ սյուները կապող կամարների վրա է նստած եկեղեցու փոքրիկ գմբեթը, որին կարելի է մոտենալ՝ դրսի կողմից անցնելով Ս. Հարության տաճարի եթովպական մասով (տաճարի գավիթ-բակի կողմից) և դուրս գալով բացվող ընդարձակ բակը:

Եկեղեցին տարբեր ժամանակաշրջաններում նորոգվել և փոփոխություններ է կրել հատկապես ներքին հարդարանքի տեսանկյունից: Եկեղեցու կիրառական սպասքը, շարժական մոմակալներն ու սրբապատկերները ևս փոխարինվել են ժամանակի ընթացքում⁵: Վերջին նորոգությունն այստեղ (մասնակի նաև՝ «Հանդերձից բաժանման խորան») և Երկրորդ Գողգոթա սրբատեղիներում) իրականացվել է 2018-2019 թթ.: Մարմարով սալարկվել է եկեղեցու հատակը, բեմը և սրահը միմյանցից անջատող նախկին մետաղյա ճաղավանդակը փոխարինվել է հատակից մոտ 1,5 մ բարձրություն ունեցող սպիտակ մարմարից զարդաքանդակ բազրիքով, տեղադրվել են մարմարյա սպիտակ գահ, վարդագույն մարմարից զույգ աշտանակներ, թարմացվել և մաքրվել է խորանը⁶, գմբեթը ներքուստ ամբողջությամբ նկարազարդվել է հայ եկեղեցու նշանավոր սրբերի պատկերներով, որոնք ունեն նաև համապատասխան մակագրություններ: Գմբեթի կենտրոնում ներքուստ պատկերված է Քրիստոսը՝ ճառագող լույսերի մեջ նստած, ձախ ձեռքին խաչով պսակվող երկրագունդն է, իսկ աջով օրհնում է: Քրիստոսից ցած պատկերված են հրեշտակները, ապա կամարակապ չորս սյուների վերին անկյուններում չորս ավետարանիչների պատկերներն են՝ դարձյալ համապատասխան մակագրություններով: Հայոց սրբապատկերների միջև՝ ս. Գրիգոր Նարեկացու կողքին, հետևյալ գրությունն է.

«Վերանորոգեցաւ նորօք մարմարեօք
յատակն եկեղեցոյս Լուսաւորչի,
եւ նկարազարդեցաւ գմբեթ նորին
ի պատրիարքութեան Հալէպցի
Տեառն Նուրհանայ Մանուկեան
Պատրիարքի եւ ի տեսչութեան
Հալէպցի Տեառն Սամուէլի
Ծ(այրագոյն) վ(ա)րդ(ապետ)

5 Օրինակ՝ Տ. Եպս. Պայպանը հայտնում է, որ Լուսավորչի և Հովհաննես Մկրտչի սեղանների վրա եղել են 1729 թ. արձանագիր սրբապատկերներ: Ներկայում դրանք տեղում չեն, ամենայն հավանականությամբ դրանք տեղափոխվել են Սրբոց Հակոբյանց վանքի պահոց կամ թանգարան: Տես Սուրբ երկիր. նկարագրութիւն Սուրբ Երուսաղէմի եւ սրբազան տեղեաց, հատ. Ա, աշխատասիրոց **Տ. Վրդպտ. Պալեան Թալասացի**, հրատ. Նշան Կ. Պէրպէրեան, Կ. Պոլիս, 1892, էջ 195-196:

6 Այս մասին առավել մասնրամասն տես Ս. Հարության տաճարի հայոց տեսչի տեղեկագրում, **Աղոյան Ծ. Վարդապետ Ա.**, Ս. Յարութեան տաճարի հայկական բաժիններու նորագութիւն, Սիոն, 2018, N 3 (յուլիս-սեպտեմբեր), Երուսաղէմ, էջ 332-342:

Աղոյեանի, ի թուին ՍԺԹ (2019).

Նկարիչ՝ Արտյոն Մելքոնյան»:

Եկեղեցու ընդարձակ սրահում աչքի են ընկնում նաև Ս. Վարդան մատուռի մուտքի մոտ կանգնեցված սպիտակ մարմարից մեծ խաչը՝ ի նշանավորումն Ս. Հարության տաճարի նորոգության տարիների, սրահի պատերին ամրացված թեմատիկ մեծ գեղանկարները, ինչպես նաև հատակի կենտրոնական մասում հայոց սրբատեղիների պատկերներով և հայերեն համապատասխան մակագրություններով ավելի վաղ արված գեղեցիկ խճանկարը, որի ստորին մասում երկաթագիր տառերով թողնվել է հետևյալ խճագիր արձանագրությունը. «Ի հայրապետութեան Տ.(Էր) Տ.(Էր) Վագգենայ սրբազնագոյն կաթողիկոսին Ամենայն հայոց եւ ի պատրիարքութեան Ա.(ուրբ) Երուսաղիմայ Տ.(Էր) Եղիշէի Ա.(րբազան) արքեպիսկոպոսին շինեցաւ խճանկար յատակ ս.(ուրբ) եկեղեցոյս ի թուին ՌՆԻԴ-ՌՋՀԵ (1975) վասն յիշատակի եւ փրկութեան քիւրաւոր նահատակացն ազգիս հայոց, որք անկան յընթացս Համաշխարհային առաջին ճակատամարտին ՌՅԿԴ-ՌՋԺԵ (1915). յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

1. Եկեղեցու արձանագրությունները

Եկեղեցին առատ է հայերեն տարածամանակյա մեծ ու փոքր արձանագրություններով, որոնց ընդհանուր թիվը մեր հաշվարկով հասնում է մոտ վեց տասնյակի: Դրանցից 13-ը եկեղեցու տարբեր հատվածներում ազուցված խաչքարերին փորագրված կանոնավոր գրություններ են, որոնք հիմնականում հրատարակվել են և հայտնի են ուսումնասիրողներին⁷: Ս. – Վարդանի մուտքի դռան ձախակողմյան մասում այսօր ազուցված կարելի է տեսնել նավաբեկ հայ ուխտավորների մասին վկայող հայտնի արձանագրությունը, որը ժամանակին պահվել է Երուսաղեմի հայոց թանգարանում և քանիցս գրավել հետազոտողների ուշադրությունը⁸:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մնացյալ արձանագրությունները հիմնականում արված են պարզ քերծման կամ խազագրման եղանակներով, որոնք աչքի են ընկնում իրենց անկանոն ու անարհեստ գրով, երբեմն միաժամանակյա մեծատառ և փոքրատառ խառը գրություններով: Դրանց շարքում առանձնանում են միայն մի քանի գրություններ, որոնք փորագրվել են համաչափ ու կանոնավոր տառերով և ունեն գրագետ շարադրանք:

7 Տե՛ս Khatchadourian H., Basmadjian M., L'art des khatchkars: Les pierres à croix arméniennes d'Ispahan et de Jérusalem, Paris, "Geuthner", 2014, pp. 406-407, Սաալանեանց Տ. Հ. Թ., Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագրէն աշխարհաբարի վերածեց Նշանեան Ա. եպս., հատ. Բ., Երուսաղէմ, «Սրբոց Յակոբեանց» հրատ., 1931, էջ 1294-1297:

8 Տե՛ս Macler F., Les Arméniens en Syrie et en Palestine, Marseille, Typographie et lithographie Barlatier, 1919, pp. 6-10. Սաալանեան Ա. եպս., Միաբանք եւ այցելութիւն հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, հրատ. «Սրբոց Յակոբեանց», 1929, էջ 86:

Քերծագիր այդ գրությունները հիմնականում հանդիպում են եկեղեցի իջնող աստիճանների աջակողմյան և ձախակողմյան պատերին՝ ուխտավորների փորագրած բազմաթիվ խաչերի արանքներում, զույգ խորանների հետնամասերում, գմբեթին՝ արտաքուստ: Որոշ գրություններ էլ ներկայումս ծածկված են պատերից կախված սրբապատկերներով⁹:

Քերծագրությունների ամենամեծ քանակը, սակայն, հանդիպում է եկեղեցու սրահի աջակողմյան (հարավարևմտյան) մարմարե առաջին սյան վրա (տե՛ս նկ. 1, հ^մ 3): Սյունն ունի հատակից 30 սմ բարձրությամբ ընդգծված քառակուսի նիստ, և ստորև ներկայացվող արձանագրությունների հետագա որոնումները դյուրացնելու նպատակով նշում ենք դրանց **բարձրությունը տվյալ նիստից և ուղղությունը**:

Ներկա հողվածի սահմաններում ժամանակագրական կարգով և ընտրողաբար ներկայացնում ենք հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առավել ամբողջական, համեմատաբար դյուրընթեռնելի և որոշակի հետաքրքրություն ներկայացնող թվով 16 արձանագրություն՝ ամբողջի հրատարակությունը թողնելով առաջիկայում պատրաստվելիք ժողովածուին:

Ներկայացվող յուրաքանչյուր արձանագրությանը կցել ենք համապատասխան գրչանկարը, վերծանված արձանագրություններում վնասված և անընթեռնելի հատվածները նշել ենք երեք թեք գծերով, համառոտագրությունները բացել ենք կոր, իսկ վերականգնումները՝ ուղիղ փակագծերում: Ստորև ներկայացվող նորագյուտ արձանագրություններից զատ՝ հողվածի երկրորդ մասում անդրադառնում ենք արդեն իսկ հրատարակված երեք վիմագրերի՝ դրանցում որոշ ճշտումներ և լրացումներ անելու նպատակով:

1. Փորագիր՝ ավագ խորանի ետնամասում, 1451 թ. (նկ. 3):

///Կ[Բ]Գ///(°)

խ(ա)չ [թ]վ(ին) Ջ.(1451)




⁹ Եկեղեցու վերջին նորոգումից առաջ արված լուսանկարները վկայում են, որ սրբապատկերներով ծածկված այդ գրությունների առնվազն մի մասը բավական հին է: Այդ բոլոր արձանագրությունները տեղ կգտնեն «Սուրբ երկրի և Սինայի հայերեն արձանագրությունները» ժողովածուի մեջ, որի մասին տե՛ս Մ. Է. Սթոուն, Խ. Ա. Հարությունյան, Սուրբ Հարության տաճարի հայերեն արձանագրությունները, մաս առաջին. Սուրբ Հովհաննես ավետարանիչ եկեղեցին և նրա արձանագրությունները, «Վեմ», Եր., 2020, N 2, էջ 159-162:

Ծնթ.: Արձանագրությունը փորագրված է խաչերի մեջ և խիստ վնասված է, հազիվ երևում են մի քանի տառեր: Միաժամանակ երկրորդ տողի վերջնամասի «[թ]վ Ջ»-ն, կարծես թե, որևէ կասկած չի հարուցում: Տառերի վերևում առկա գիծն էլ, թվում է՝ պատվի նշանն է: Եթե արձանագրության մեր ընթերցումը ճիշտ է, ապա սա Ս. Հարության տաճարի ներսում հայերեն հնագույն թվակիր գրություններից է:

2. Փորագիր արձանագրություն՝ արտաքուստ եկեղեցու գմբեթին՝ զարդանախշ սյան ստորին հատվածում՝ գետնից 31 սմ բարձրության վրա, 1666 թ. (նկ. 4):

S(Է)Ր
ԿԻ(ՐԱ)Կ(Ո)Ս
ՌՃԺԵ. (1666)



Ծնթ.: Փորագիր քառատող արձանագրությունը երկաթագրով է, լավ պահպանված և դյուրընթեռնելի: Պատվի նշանի ներքո համառոտված են **ՏՐ** և **ԿԻԿՍ** բառերը:

3. Անարհեստ քերձագիր՝ եկեղեցի իջնող աստիճանների վերջնամասում՝ ձախակողմյան հատվածի փորագրված խաչերի մեջ, գետնից 112 սմ բարձրության վրա, 1695 թ. (նկ. 5):

Ես՝ Նանինցի
տ(է)ր Յովանէս,
թվի(ն) ՌՃԽԴ. (1695)

S(Է)ր Յովան
էսին



Ծնթ.: Քերծագիր արձանագրությունը ոչ շատ խորը փորված լինելու, ինչպես նաև ուխտավորների արած բազմաթիվ քերծումների ու խաչերի հետևանքով փոքր-ինչ դժվարընթեռնելի է: Առանձին տառեր մասնակի վնասված են:

Վերևի գրության երրորդ տողում խնդրահարույց է թվականը. ՌՃ տառերից հետո նկատվում է Ի-ի նմանվող տառաձև, որին անմիջապես հաջորդում է փորագրված խաչի ստորին հատվածը, իսկ հետո ընթերցվում են ԽԴ տառերը: Ենթադրում ենք, որ Ի-ի նմանվող տառը Ճ-ից հետո կիսատ թողնված և չշարունակված Խ-ն է, որը հետո գրվել է խաչի մյուս կողմում:

Եռատող այս արձանագրությունից փոքր-ինչ ներքև նույն ձեռքով փորագրված է «Տէր Յովանէսին» գրությունը:


Այս արձանագրություններից աջ նկատվում են հայերեն տառաձևեր հիշեցնող մի քանի այլ նշաններ ևս, որոնք, կարծես թե, նոր քերծումներ են: Մասնավորապես 1-ին և 2-րդ տողերից մի փոքր աջ նշմարվում է «որ» տառախումբը:

Նանինցի տեղանվանացույց մականունից հավանաբար կարելի է ենթադրել, որ հիշատակված տեր Հովհաննեսը ծնունդով Արևմտյան Հայաստանի Մոկս գավառի (Վան) Նանենց¹⁰ գյուղից է եղել:

4. Քերծագիր գրություն՝ ավագ խորանի ետնամասում՝ ձախից. գետնից 50 սմ բարձրության վրա, 1723 թ. (նկ. 6)

խ(ա)չս
 //ւ
 //ւ
 ծս(ո)ղ(ա) ց

խ(ա)չ
 ս յ(ի)շ(ա)տ(ակ) [է]
 [Առա՞]քել ք(ա)հ(ա)ն(ա)յ(ին) և ի
 <նօղց> ւր ծ(ն)օղ(ա)ց՝ Գրիգ(որի)ն,
 Զան(ա)թ(ի)ն.
 [Ռ]Ճ թվ(ին) ՀԲ. (1723)



Ծնթ.: Փորագիր արձանագրությունը դժվարընթեռնելի է, կան մասնակի կան ամբողջությամբ վնասված հատվածներ: Հավանաբար նախապես վե-

10 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 3, 4-Ն, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1991, էջ 962:

րևի հատվածում փորձ է արվել փորագրել գրությունը, սակայն տեղը բավարար չլինելու հետևանքով նույն ձեռքով փորագրվել է ցածինը՝ համեմատաբար հարթ և ավելի ընդարձակ մակերեսին: Ըստ որում՝ ենթադրաբար, վերևի գիրն այնուհետև ջնջելու փորձ է արվել, որի պատճառով տառերը հազիվ են նշմարվում:

Վնասված է նաև երկրորդ արձանագրության երրորդ տողի սկզբնամասը, որոշակի երևում են միայն անձնանվան վերջին **քել** տառերը, ապա **քիյ** տառախումբը, որում ք-ն ավելի նման է գ-ի: Դատելով վերջնամասի ընթացիկ տառերից և դրանց նախորդող մասում ո-ի նմանվող տառի առկայությունից՝ վնասված հատվածում վերականգնել ենք **Առաքել** անունը: Նշված տողից ցած, թերևս, կրկին փորագրափորձ է՝ «սողց» ձևով, որն, ըստ ամենայնի, «ծնողաց» բառի քերծագրման փորձ է: Ուշադրություն է գրավում արձանագրության մեջ վկայված **Ջանաթ** իգական անունը, որի այլ կիրառություններ գտնում ենք նաև ԺԷ. դարի մի քանի հիշատակարաններում՝ արական գործածությամբ: Նկատենք, որ անունն արձանագրված չէ «Հայոց անձնանունների բառարան»-ում¹¹:

Թվականի փորագրումը նույնպես հետաքրքիր է. այս դեպքում փորագրիչը **ՌՃ** տառախմբից հետո փորագրել է **թվ** համառոտագրությունը, ապա լրացրել թվականի **ՀԲ** տառախումբը: **Ռ**-ն եղծված է, ուստի՝ այն ներկայացրել ենք վերականգնումով:

5. Անարհեստ քերծագիր՝ սրահի աջակողմյան մարմարե առաջին սյանը՝ նիստից 110 սմ բարձրության վրա, 1751 թ. (նկ. 7):

Թվ(ի)ն ՌԲՃ. (1751)
Ես՝ Իսմայելյցի
Պարխուտարս



Ծնթ.: Արձանագրության գիրը խառն է. միաժամանակ փորագրված է մեծատառերով և փոքրատառերով: Չնայած շուրջբոլորն առկա բազմաթիվ քերծումներին՝ գրությունը հիմնականում լավ պահպանված է և դյուրընթեռնելի: Կողքերին կան նաև այլ լեզուներով թողնված գրություններ:

Պարխուտար անունը հայոց մեջ հաճախ հանդիպող **Բարխուդար** անվան հնչյունական տարբերակներից է՝ գրանցված «Հայոց անձնանունների

¹¹ Տե՛ս, օրինակ, Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հատ. Բ, կազմեցին՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 208 և 789:

բառարան»-ում¹²: **Իսմայելցի** մականունից պետք է ենթադրել, որ հիշատակված Պարխուտարը Երուսաղեմ է ժամանել կամ ծնունդով եղել է ներկայիս Ուկրաինայի Օդեսայի մարզի Իզմայիլ կամ Իսմայիլ քաղաքից (նախապես գտնվել է պատմական Բեսարաբիայի կազմում): Չնայած այն հանգամանքին, որ հայությունն այս հատվածներից դուրս էր եկել հիմնականում ԺԸ դարի վերջերին¹³, սակայն երբեմնի հայաբնակ այս քաղաքում առնվազն մինչև Ի դարի կեսերը դեռևս կանգուն է եղել տեղի հայկական Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցին, որը քանդվել է 1960-ական թթ.: Հայ վիմագրության դիվանի 7-րդ պրակում տեղ է գտել նշված եկեղեցու կառուցապատման քարերից մեկի վրա թողնված և ներկայումս չպահպանված մի արձանագրություն՝ ուղեգիր և հնահավաք Քրիստափոր ՔուչուկՆովհաննիսյանի վերձնությանը, ըստ որի՝ եկեղեցին վերանորոգվել է 1763 թ.¹⁴: Ծավալուն արձանագրության մեջ մեր ուշադրությունը գրավեց հիշատակված մահտեսի **Պերխուդարը**, որն այլ բարերարների հետ միասին նյութապես աջակցել է եկեղեցու վերանորոգմանը: Հավանաբար, վերջինս եղել է տեղի հայ համայնքի երևելիներից: Արձանագրությունից մեջբերենք մեզ հետաքրքրող հատվածը. «...այլև յիշեսջիք զարեւելցի մահտեսի Պերխուդարին, որ աշխատութեամբ եւ յոլով արդեամբք օգնեաց շինութեամբ եկեղեցիս...»¹⁵:

Ըստ ամենայնի՝ Հարության տաճարի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քննվող քերձագրում հիշված է նույն Պարխուտարը՝ Իսմայելցի տեղանվանացույց մականվամբ, որը Երուսաղեմից վերադառնալուց հետո ստացել է նաև մահտեսի պատվանունը: Սրանով, փաստորեն, երուսաղեմյան այս փոքրիկ գրությունը ստանում է լրացուցիչ մի նշանակություն. այն վավերացնում է Իսմայիլի հայկական եկեղեցու չպահպանված վիմագիրը և դրանում հիշատակված առնվազն մեկ անձի հետ կապված տեղեկությունը: 6. – Փորագիր արձանագրություն՝ նույն սյան նիստից 122 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի ավագ խորան, 1778 թ. (նկ. 8):

ԵՍ ԹԱՄԱՆՑԻ ԱԴԱՄՍՂ
Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ՎԱՐԴԱՆԸՍ
ԵԿԻ ՌՄԻԷ.(1778)ԻՆ



12 Տե՛ս **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բնագրություն, Երևան, 1942, էջ 390:

13 Բեսարաբիայի շրջանը լքած հայ բնակչությունը, այդ թվում՝ իսմայիլահայությունը, տեղափոխվեց Ռուսաստանի հարավային հատվածներ, որտեղ էլ 1792 թ. հիմնադրվեց Գրիգորիոպոլ քաղաքը: Այս մասին մանրամասն տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հատ. Ա, Սլավոնական աշխարհի և հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, խմբ. ՀՀ ԳԱԱ ակադ. **Սիթայեյան Վ.**, Եր., 2003, էջ 456-459:

14 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց **Գրիգորյան Գ. Ս.**, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ, Եր., 1996, էջ 257614: Իսմայիլ քաղաքի հայերեն արձանագրությունների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս **Հարությունյան Ա. Է.**, Իզմայիլի հայերեն վիմագրերը. նոր գտածոներ, «ՎԷՄ», Եր., 2019, N 4, էջ 182-195:


15 Դիվան հայ վիմագրության, պրակ VII, նշվ. արձն.:

Ծնթ.: Փորագրված է գեղեցիկ և տարբերվող երկաթագրով, փոքր-ինչ վնասված է միայն առաջին տողի վերջնամասը, որտեղ հավանաբար փորագրված է եղել ևս մեկ-երկու տառ: Արձանագրության շուրջըրըրը կան գանազան քերծումներ, այլ լեզուներով նշումներ:

Թամանցի տեղանվանացույց մականունից կարելի է ենթադրել, որ հիշատակված անձանցից առնվազն Ադամը Թամանից է եղել: Ըստ ամենայնի՝ խոսքը ներկայիս Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Թամանի թերակղզու մասին է՝ Սև և Ազովի ծովերի միջև գտնվող, որը վերջին տասնամյակների ընթացքում հայոց մեջ առավել հայտնի է Երկրորդ համաշխարհային պատերազմի առիթով, երբ հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան, այս նույն վայրում հերոսական մարտեր վարելով, ստացել է «Թամանյան» պատվավոր կոչումը¹⁶: Սակայն Թամանում և նրա մերձակայքում հայերի ներկայությունն ունի շատ ավելի վաղ պատմություն: Դրիմին և առհասարակ, Սև ծովի ավազանին մերձակից այս հատվածի հայերի՝ Անիից սերող **չերքեզահայերի** մասին հիշատակություններ կարելի է գտնել դեռևս Ժ-ԺԱ. դդ.¹⁷: – Մեզ հետաքրքրող շրջանում էլ հայերը, հատկապես դրիմահայերը, գործունե մասնակցություն են ունեցել այս տարածքներով իրականացվող առևտրում¹⁸:

7. Փորագիր արձանագրություն՝ սյան նիստից 155 սմ բարձր, ուղղույթյունը՝ դեպի եկեղեցի իջող աստիճաններ, 1793 թ. (նկ. 9):

Լուսարար մ(ա)հ(տես)ի
Կարապետ,
ՌՄԽԲ. (1793)




Ծնթ.: Գրությունն ամբողջությամբ փոքրատառ է, լավ պահպանված և դյուրընթեռնելի: Ըստ ամենայնի՝ մահտեսի Կարապետը լուսարար է եղել Ս. Հարության տաճարում, թեև նրա մասին մեզ չհաջողվեց տեղեկություն գտնել:

7. Փորագիր արձանագրություն՝ սյան նիստից 130 սմ բարձր, ուղղույթյունը՝ դեպի Գյուտ խաչի մատուռ, 1797 թ. (նկ. 10):

16 Հայկական դիվիզիաների մասին առավել հանգամանալից տես **Հարությունյան Կ.**, Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի պատմական նշանակությունը և հայ ժողովրդի ավանդը հաղթանակում, «Լրաբեր» հաս. գիտ., 2020, N 1, Եր., էջ 21-25:
17 Տես Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հատ. Ա, էջ 43:
18 Տես նույն տեղում, էջ 205:


Մ(ա)հ(տես)ի Պիրճիտս, մ(ա)հ(տես)ի
Հանրմ, մ(ա)հ(տես)[ի] Մարգա[ր]իտ
ՌՄԽԶ. (1797)



Ծնթ.: Արձանագրությունն ամբողջությամբ փոքրատառերով է: Ուշադրություն է գրավում **Պիրճիտ** անձնանունը, որը, թերևս, եվրոպական **Բրիջիթ** իգական անվան աղավաղված տարբերակ է: «Անձնանունների բառարան»-ում այս անունը գրացված չէ: Գրանցված չէ նաև **Հանրմ** իգական անձնանունը, որը թուրք. **հանրմ** «տիկին»¹⁹ բառից է: Միաժամանակ պետք է նշել, որ այս վերջին անունը հաճախադեպ է ուշ միջնադարի հայերեն գրավոր աղբյուրներում (հիմնականում՝ **Հանում**, **Խանում** ձևերով), այդ թվում՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում²⁰:

9. Անարիեստ փորագրություն՝ սյան նիստից 70 սմ բարձր, ուղղությունը՝ դեպի Գյուտ խաչի մատուռ իջնող աստիճաններ (նկ. 11):

Մ(ուր)բ խաչս յիշ(ա)տ(ա)կ է
Յօհանէսի եւ իւր
ծ<օ>նօղ(ա)ց



Ծնթ.: Արձանագրության գիրը խառն է. փորագրված է ինչպես երկաթագիր, այնպես էլ բոլորգիր տառերով: **Իւր** դերանվան վրա երևում է պատվի նշանը: Արձանագրությունը թողնված է անարիեստ փորագրված խաչի ներքևում: Ձախ խաչաթևի տակ նշմարվում է նաև այլ ձեռքով քերծված «Ե» տառը:

19 Աճառեան Հ., Թուքերինէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր Նախիջեւանի բարբառներուն, Լազարեան ձեմարան արեւելեան լեզուաց, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 208:
20 Տես Հայերեն ձեռագրերի մէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հատ. Ա, կազմեցին՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1974, էջ 255, 299, 463: Հայերեն ձեռագրերի մէ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հատ. Գ, կազմեց Հակոբյան Վ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1984, էջ 196, 310 և այլն:


10. Կցագրություն՝ սյան նիստից 135 սմ բարձր, ուղղությունը՝ դեպի ավագ խորան, անթվական (նկ. 12):

ՊԵՏՐՈՍ



11. Անարհեստ քերձագիր՝ սյան նիստից 78 սմ բարձրության վրա, ուղղությունը՝ դեպի ավագ խորան, անթվական (նկ. 13):

Կարապետ



Ծանոթ.: Կարապետ անունից փոքր-ինչ վերև նշմարվում են հայատառ այլ քերծումներ ևս՝ *գ, ի, ս, կ, ա*, որոնցով, սակայն, որևէ բառ չի հոդվում:

12. Քերձագիր գրություն՝ եկեղեցի իջնող աստիճանների ձախակողմյան պատին՝ աստիճանից 115 սմ բարձրության վրա, անթվական (նկ. 14):

Յոհ(ա)նէս



Ծանոթ.: Մանր բոլորգրով քերծված արձանագրությունը թողնված է ուխտավորների փորագրած խաչերի մեջ և բավական դժվար է նկատելը:

13. Քերձագիր գրություն՝ եկեղեցի իջնող աստիճանների ձախակողմյան պատին՝ աստիճանից 33 սմ բարձրության վրա, անթվական (նկ. 15):


Ա(ստուա)ծ(ա)տրին



Ծնթ.: Քերծագիրը նախորդի նման ուխտավորների փորագրած խաչերի մեջ է, և կրկին բավական դժվար է նկատելը: Անվան առաջին բաղադրիչը պատվի նշանով համառոտագրված **Աստուած** բառն է:

14. Քերծագիր գրություն՝ եկեղեցի իջնող աստիճանների ձախակողմյան պատին՝ աստիճանից 120 սմ բարձրության վրա, անթվական (սկ. 16):


Ա(ստուած)այտուր



Ծնթ.: Դարձյալ քերծագրված է ուխտավորների փորագրած խաչերի մեջ. անվան առաջին երկու տառերը ներկայացնում են **Աստուած** բառի տարածված համառոտագրությունը:

15. Փորագիր՝ ս. Հովհաննեսի խորանի ետնամասում՝ ձախից, գետնից 33 սմ բարձրության վրա, անթվական (սկ. 17):

Յ(հ)Շ(ԱՏԱ)Կ Է Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ Բ(Ա)ՇԻՆ
Թի/// դաս///
///ի/// ոց///



Ծնթ.: Արձանագրությունը խոշոր և գեղեցիկ երկաթագրով է՝ փորագրված խորանի ետնամասում՝ փորագիր խաչերից ազատ մնացած հատվածում: Լավ պահպանված և դյուրընթեռնելի է:

Աստվոր է **Բջին** անվանաձևը, որը մենք վերծանել ենք **Բ(ա)ջին** ձևով, թեև հնարավոր է նաև **Բ(է)ջին** տարբերակը: Ըստ ամենայնի՝ այս անունը մեկ այլ անվան կրճատ կամ փոփոխված տարբերակներից է:

Արձանագրությունից փոքր-ինչ ներքև հետագայում այլ ձեռքով հավելվել է մի նոր գրություն, որից միայն առանձին տառեր են երևում:

16. Քերծագիր գրություն՝ ավագ խորանի ձախակողմյան պատին, գետնից 112 սմ բարձրության վրա, անթվական (սկ. 18):

Առա[քե]լ
Կիրակոս
Հայրաբէ[դ՞]
Պետ[րո]սի



Խաչաթևերի կողքերը՝
[Ա]ռ///
[ք]ելին
առ///
րին
նս

Ծանոթ.: Ոչ շատ խորը փորված լինելու և բազմաթիվ քերծումների հետևանքով փորագրված անունների մի մասը խիստ դժվարընթեռնելի է:

2. Լրացումներ և ձշտումներ

Հողվածի այս մասում անդրադառնում ենք Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն գտնվող և արդեն իսկ հրատարակված երեք արձանագրության, որոնցում հիշատակված անձանց վերաբերյալ հնարավոր է եղել լրացուցիչ տեղեկություններ գտնել և որոշ ձշտումներ անել:

Դրանցից առաջինը եկեղեցու ավագ խորանի հարավային կողմում է՝ «ս. Հեղինեի պատուհան» կոչվող հատվածում ագուցված խաչքարերից մեկի ստորին մասում (նկ. 19 ա և բ): Ահա արձանագրությունը և նրա հիմնական մասի գրչանկարը. տերունական անունների համառոտագրությունները խաչաթևերի միջակայքում են:

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ
Է
Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս
[Կ(Ա)Ն]ԳՆ(Ե)Ց(Ա)Ի Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ Բ(Ա)Ր(Ե)Խ(Օ)Ս ԱՌ
[Ա](ՍՏՈՒԱ)Ծ Վ(Ա)ՄՆ ԱԿՆՑԻ ՊԱՊԱ [Ռ]ՃՁԵ. (1736) ՄԱՀ(ՏԵՍ)Ի
Պ(Ե)ՏՐՈՍԻՆ

ԳՆԾԻՄԻՒԱԶՍԻՒՍԱՆՈՒ ՏՎԱԿՆԻՄԻՔԻ ԱԿՄՈՒՄ

Ծնթ.: Բուն արձանագրությունը փորագիր երկաթագիր է՝ զետեղված զարդանախշ խաչաքանդակի ստորին մասում: Ոչ այնքան խորը փորված լինելու հետևանքով մի քանի տառեր բավական դժվարընթեռնելի են: Մասնավորապես, խիստ թեական է երկրորդ տողում կցագիր **ՊԱՊԱ** բառից հետո եռատառ գրությունը, որը մենք վերծանել ենք որպես թվական՝ **ՌՃՁԵ** ձևով, որում բացակայում է **Ռ**-ն: Նշյալ տառախմբից հստակ երևում են **Ճ**, նրանից փոքր-ինչ ցած՝ **Ձ**, ապա **Ե** տառի մի մասը, որից էլ ենթադրել ենք, որ այստեղ փորձ է արվել զետեղել արձանագրության թվականը: Չնայած խաչքարի գեղարվեստական հարդարանքի և արձանագրության հնագրական առանձնահատկությունները, ինչպես նաև ստորև ներկայացվող Ակնցի մահտեսի Պետրոսի մասին մեր գտած տեղեկությունները վերծանության համար առաջարկվող թվականի հետ ներդաշնակ են, այնուամենայնիվ, ձեռնպահ կմնանք միանշանակ պնդել թվականին վերաբերող մեր վարկածը: Սույն վիմագրին մենք անդրադարձել ենք մահտեսի Պետրոսի մասին ի հայտ եկած նոր տեղեկությունների առիթով: Նկատենք միայն, որ քննվող վիմագիրն առաջինը հրատարակած Մ. Բասմաջյանն ու Հ. Խաչատուրյանը խնդրահարույց այս հատվածում ընթերցել են «ՊԱՊՃԻ» բառը²¹:

Արձանագրության մեջ հանդիպող **պապա** (թուրք. «հայր, հոգևոր հայր, հարգարժան կամ տարեց այր»²²) կցագիր բառը մեկ անգամ չէ, որ հանդիպում է երուսաղեմյան արձանագրություններում: Օրինակ՝ ԺԷ. դ. երկրորդ կեսին տեղի տարբեր վիմագրերում վկայված է Մինաս պապա վեքիլը²³: Այլ վկայությունների նույնպես հանդիպել ենք: Ամենայն հավանականությամբ, այս դեպքում էլ Ակնցի մահտեսի Պետրոսի համար գործածված է **պապա** մակդիրը՝ թերևս «պատվարժան այր» իմաստով:

Երուսաղեմի ձեռագրացուցակում կատարած մեր պրպտումները երևան հանեցին ոմն մահտեսի Պետրոս Ակնցու, որի գլխավորությամբ 1745 թ. հոկտեմբերի 14-ին 270 ուխտավորներ Ստամբուլից Երուսաղեմ են ժա-

21 Տե՛ս **Khatchadourian H., Basmadjian M.**, նշվ. աշխ., էջ 407 (արձ. JER-SEP015):

22 **Redhouse's** Turkish dictionary in Two Parts, English and Turkish, and Turkish and English, second edition, revised and enlarged by **Wells Ch.**, London, Bernard Quaritch, 15 Piccadilly, 1880, p. 448.

23 Տե՛ս **Աղաւնուհի Մ. Եպս.**, Միաբանք եւ այցելութիւն հայ Երուսաղեմի, էջ 289-290:

մանել²⁴: Հավանաբար այստեղ հիշատակված է նույն անձը, որը թե՛ Ժամանակով և թե՛ անվամբ ու տեղանվանացույց մականվամբ համընկնում է քննվող արձանագրության մահտեսի Պետրոսի հետ:

Ակնցի Պետրոսը հիշատակված է եղել նաև Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերի տեսած եռատող մի արձանագրության մեջ: Անվանի հայագետը փորձել է այն վերծանել²⁵:


Հետագայում այդ արձանագրությունը Մակլերի հրատարակությունից նույնությամբ քաղել է Մ. Եպս. Աղավնունին: Ահա այն՝ ըստ Աղավնունու հրատարակության. «Աձ. վս. Ակնցի Ահի? Պտրոսին եւ ծնողացն, որ աշխատաց ի նորոգումն սբ. տաճարիս յիշեցէք ի տէր»²⁶: Երևում է, որ գրությունը սկզբից պակասավոր է և ունի որոշ վրիպակներ. արձանագրության **Ահի** տառախումբը, կարծում ենք, պետք է ընթերցել **ՄԱՀԻ** ձևով, քանի որ Մ և Ա տառերը, որպես կանոն կցագրված են, ինչպես օրինակ, վերոբերյալ արձանագրության մեջ: Արդյունքում Մակլերի և Աղավնունու հիշատակած արձանագրությունը, որոշ սրբագրություններ անելով, կարելի է ընթերցել այսպես. «[...բարեխօս առ] Ա(ստուա)ծ վ(աս)ն Ակնցի մահ(տես)ի Պ(ե)տրոսի եւ ծնողացն, որ աշխատ(ե՞)աց ի նորոգումն սուրբ տաճարիս. յիշեցէք ի Տէր»: Դժվար չէ նկատել, որ այս արձանագրության սկզբնամասը խիստ նման է քննվող խաչքարի արձանագրությանը:

Այսպիսով՝ հնարավոր ենք համարում, որ թե՛ ձեռագրում և թե՛ այս երկու վիճագրերում հիշատակված մահտեսի Պետրոս Ակնցին միևնույն անձն է: Մեր նշած վիճագրում մահտեսի Պատրոսը հիշված է նաև պապա պատվանունով:

Հաջորդ վիճագիրը փորագրված է դարձյալ նույն հատվածում ագուցված 1747 թվականի խաչքարի ստորին մասում (նկ. 20ա և բ): Ստորև ներկայացնենք արձանագրության մեր վերծանությունը և արձանագիր հիմնական հատվածի գրչանկարը. տերունական անունների համառոտագրությունները խաչաթևերի միջակայքում են:

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ
 Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս
 ՅԻՇ(Ա)Տ(ԱԿ) [Է] Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ ԿԷՆՃ(Ե)ՑԻ Յ(Ա)Կ(Ո)Բ
 Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ(ԻՆ) ԵԻ ԾՆ(Ո)Ղ(Ա)ՑՆ՝ Տ(Է)Ր ՌՍՍ(Ա)ԳԷ
 [Ս]ԻՆ ԵԻ ՄԱՐԳ(Ա)ՐՏԻՆ ԵԻ ԻԻՐ Ք(Ո)ԻԵՐՈՐԴ(ԻՈ)Յ
 ՄԱՀ(ՏԵՍ)Ի ՄՈՄՃԻ ՅԱՐՈՒԹ(Ի)ԻՆ(ԻՆ) ԵԻ ԾՆ(Ո)Ղ(Ա)ՑՆ՝

24 Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. ԺԱ, կազմեց **Պողարեան Ն. արքեպս.**, Երուսաղեմ, տպ. «Սրբոց Յակոբեանց», 1991, էջ 132:
 25 Տե՛ս **Macler F.**, Les Arméniens en Syrie et en Palestine, pp. 6-7.
 26 **Աղանունի Մ. եպս.**, Միաբանք եւ այցելութ հայ Երուսաղեմի, էջ 409:



Փորագիր արձանագրությունը երկաթագրով է՝ գետեղված խաչաքանդակի ստորին մասում: Արձանագրությունն առաջինը հրատարակած Մ. Բասմաճյանն ու Հ. Խաչատուրյանը վերջին տողում՝ թվականից առաջ ընթերցել են **Ղալանքար** անունը²⁷, որի գրությունը չի հաստատվում ուշադիր զննությամբ: Արձանագրության գրչանկարից երևում է, որ այստեղ վկայված է **Ղանքար** իգական անձնանունը, որը հայոց մեջ հաճախ հանդիպող **Ղամքար** անվան տարբերակներից է²⁸: Ըստ որում՝ հարկ է նկատել, որ «Հայոց անձնանունների բառարան»-ում **Ղանքար** ձևի առանձին հիշատակում չկա, սակայն գրավոր հուշարձաններում, մասնավորապես ձեռագրերի հիշատակարաններում կարելի է գտնել այդ նույն անվան այլ տարբերակներ ևս: Օրինակ՝ 1655 թ. մի հիշատակարանում նշված անունը գտնում ենք նաև **Ղանպար** ձևով²⁹: Արձանագրության մեջ նշված **Ռստագէս** անունն էլ հայոց մեջ տարածված **Արիստակէս** անվան աղավաղված ձևերից է³⁰:

Քննվող գրության մեջ ուշադրություն է գրավում նաև **Կենձեցի** տեղանվանացույց մականունով Հակոբ վարդապետը, որը, ըստ Աղավնունու կազմած ցանկի, եղել է Սրբոց Հակոբյանց միաբան³¹: Ամենայն հավանականությամբ՝ Հակոբ վարդապետ Կենձեցին ծնունդով եղել է Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Գենջ գյուղաքաղաքից³²:

Երրորդ արձանագրությունը մանր երկաթագրով փորագրված է Գյուտ խաչի մատուռ իջնող աստիճանների ձախակողմյան պատի վերջնամասում (Գրիգոր Լուսավորչի խորանի հարավային կողմում) ազուցված 1792 թվականի փոքր խաչքարի ստորին մասում (նկ. 21ա և բ): Ստորև ներկայացնում

27 Տե՛ս Khatchadourian H., Basmadjian M., նշվ. աշխ., էջ 407 (արձ. JER-SEP017):

28 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Երևանի պետական համալսարանի հրատ., Եր., 1946, էջ 130-131:

29 Տե՛ս Հայերեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հատ. Գ, էջ 677:

30 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, էջ 277:

31 Տե՛ս Աղավնունի Մ. եպս., Միաբանք եւ այցելութիւն հայ Երուսաղէմի, էջ 328:

32 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Սելիջ-Քախչյան Ստ. Տ., Քարտեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, Ա-Դ, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1986, էջ 835:

ենք արձանագրության վերձանությունը և բուն արձանագիր հատվածի գրչանկարը. տերունական անունների համառոտագրությունները խաչաթների միջակայքում են:

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ

Է

Յ(ԻՍՈՒ)Ս Զ(ՐԻՍՏՈ)Ս

Ս(ՈՒՐ)Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽՈՍ ՊԱՏՃԱՌ

ԸԼԼՈՂԱՑ ԵՒ ԵՐԿԸՐՊԱՔՈՂԱՑ

ԱՄԷՆ. Թ(ՎԻ)Ն ՌՄԻԱ. (1792)

ՄԻ ԽԱԶՍ ԲԱՐԵԽՈՍ ՊԱՏՃԱՌ
ԸԼԼՈՂԱՑ ԵՒ ԵՐԿԸՐ ՊԱՔՈՂԱՑ
ԱՄԷՆ. ԹՎ. ՌՄԻԱ.

Խաչքարի ստորին մասի եռատող արձանագրությունը փորագիր երկաթագիր է՝ լավ պահպանված և դյուրընթեռնելի:

Արձանագրության մեջ փոքր-ինչ դժվարություն է հարուցում երկրորդ տողի առաջին բառը, որը մենք ընթերցում ենք «ըլլողաց» ձևով: Կարծում ենք, որ սա հայերեն **լինել** բայի ենթակայական դերբայի բարբառային և խոսակցական տարբերակներից է (հմնտ. նաև **ըլնող, ըլող**)՝ դրված գրաբ. տրական հոլովածևով (լինողաց > ըլլողաց): Այսինքն՝ գործ ունենք **պատճառ լինել** բայական հարադիր կառույցի հետ, որը հաճախադեպ է հատկապես ձեռագիր հիշատակարաններում: Ահա մեկ օրինակ՝ «Յիշեցէ՛ք... Խաչատուր քահանային, որ պատճառ եղև գրոյս գրելոյն»³³: Ահա ևս մեկը. «Աստուած արինէ՛ղ զխաւջա Սինայքարին, որ... եղև բարի պատճառ, եւ սուրբ Աւետարանս աւարտի(ս)ք»³⁴: Նշված օրինակներում **պատճառ լինել** (գրաբար անց. Կատարյալ՝ **եղև**) բառակապակցությունը նշանակում է «սատարել, օգնել» (նաև նյութապես):

Հաշվի առնելով, որ սույն արձանագրության մեջ նշված չէ որևէ անուն, և այն ունի ընդհանուր բովանդակություն, պետք է ենթադրել, որ խաչքարը նվիրված է տվյալ վայրի շինությանը կամ նորոգությանը օժանդակություն (այդ թվում՝ նյութական) ցուցաբերածներին:

Նկատենք, որ քննվող արձանագրությունը հրատարակված է Մ. Բասմաձյանի և Հ. Խաչատուրյանի նշված ուսումնասիրության մեջ: Խնդրահարույց մասում հետազոտողներն ընթերցել են «[Ա]ՈՂԱՑ» տառախումբը³⁵, որը չի հաստատվում:

Այսպիսով, հոդվածում ներկայացված արձանագրությունները վկայում են, որ հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ս. Հարության տաճարի հայերեն գրություններով հարուստ սրբատեղիներից է, որի տարբեր անկյուններում ուխտավորները թողել են բազմաթիվ հիշատակագրություններ՝ հիմնա-

33 Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հատ. Ա, էջ 123:
34 Նույն տեղում, էջ 271:
35 Տե՛ս Khatchadourian H., Basmadjian M., նշվ. աշխ., էջ 407 (արձ. JER-SEP020):

կանում անվարժ քերծման կամ փորագրման եղանակներով: Եկեղեցում կան նաև մեկ տասնյակից ավելի ազուցված արձանագիր խաչքարեր, եկեղեցական զանազան իրեր (գրակալ, մոմակալներ, ձրագակալներ և այլն), որոնցից առաջիններն իրենց արձանագրություններով տեղ են գտել Մ. Բասմաջյանի և Հ. Խաչատուրյանի արժեքավոր ուսումնասիրության մեջ, իսկ մյուսներն առայժմ բավարար չափով ուսումնասիրված և հրատարակված չեն: Սույն հողվածի շրջանակներում մեր խնդիրն է եղել քննել ու արժևորել եկեղեցու առայժմ անտիպ վիմական ժառանգությունը և ցույց տալ դրա առատությունը: Հողվածի երկրորդ բաժնում որոշ ծշտումներ և տեղեկություններ ենք հավելել արդեն իսկ հրատարակված երեք վիմագրերին:

Մայրլ Է. Սթոուն – Երուսաղեմի Եբրայական համալսարանի պրոֆեսոր, հայագետ: Երկար տարիներ զբաղվել է հայագիտական տարբեր հարցերի ուսումնասիրությամբ, մասնավորապես նրա ուշադրության կենտրոնում են եղել պարականոն գրականությունը, հայ-հրեական առնչությունները, հայկական հնագրությունը, ինչպես նաև վիմագրությունը: Այս թեմաներով հրատարակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ:

Էլեկտրոնային հասցե՝ stone.michael.e@icloud.com
website: apocryphalstone.com

Խաչիկ Ա. Հարությունյան – Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, ձեռագրագետ: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց ձեռագրական և վիմագրական ժառանգությունը՝ իր տարաբնույթ դրսևորումներով: Հետազոտությունները հիմնականում առնչվում են գրավոր այդ սկզբնաղբյուրներին, դրանց լեզվական, հնագրական, ոճական առանձնահատկություններին:

Էլեկտրոնային հասցե՝ khachik.har@gmail.com

Summary

ARMENIAN INSCRIPTIONS OF THE CHURCH OF HOLY SEPULCHRE IN JERUSALEM

Part 3. The Church of St. Gregory the Illuminator (St. Helena Chapel)

Michael E. Stone (Jerusalem)

Member Israel Academy of Sciences and Humanities

Khachik A. Harutyunyan

Candidate of Philological Sciences

Key words – Jerusalem, Christianity, sanctuaries, monasteries, pilgrims, manuscript, inscription, graffiti, colophon.

One of the oldest and most beautiful buildings of the Church of the Holy Sepulchre is the Armenian St. Gregory the Illuminator Church (commonly known as the Chapel of St. Helena) located in the eastern part and on the lower level of the Holy Sepulchre Church, just a few steps away from the Armenian small chapel called “The Division of the Garment”. There is a narrow entrance, from which the gradually widening stairs descend to the spacious hall of the church.

There are two altars in the church. The main altar is dedicated to St. Gregory, right of which there is a small altar dedicated to St. John the Baptist. According to the Armenian tradition, the relics of St. John were buried under this small altar, by St. Gregory the Illuminator during his visit to Jerusalem in the early 4th century.

The church is rich in extensive and short Armenian inscriptions, the total number of which, according to our calculations, reaches about six dozen. 13 of them are regular inscriptions in Erkat‘agir (uncial) script, carved on small khachkars in different parts of the church, which were mainly published and are known to scholars. The rest of the inscriptions are mostly made by the simple scratching method, and are marked by their irregular writing. The oldest dated Armenian inscription in this chapel seems to be a graffito scratched in 1451 (see no 1), after which we have discovered another graffito scratched on the outside of the cupola in 1666 by an unknown Ter (= priest) Kirakos (see no 2).

Within the limits of the present article, we selectively present 16 inscriptions of the most complete, leaving the others for the forthcoming collection of the project “The Armenian Inscriptions of the Holy Land and Sinai”. In addition to the presented graffiti, in the second part of this article, we discuss three inscriptions that have already been published in order to make some corrections and additions to them.

АРМЯНСКИЕ НАДПИСИ ХРАМА ГРОБА ГОСПОДНЯ В ИЕРУСАЛИМЕ

Часть 3. Церковь Святого Григория Просветителя (Церковь Святой Елены)

Майкл Э. Стоун (Иерусалим)
Член Израильской академии наук
Хачик А. Арутюнян
Кандидат фил. наук

Ключевые слова - Иерусалим, христианство, святыни, монастыри, паломники, рукопись, надпись, граффити, колофон.

Одним из старейших и красивейших зданий храма Гроба Господня является армянская церковь Святого Григория Просветителя (широко известная как Церковь Святой Елены), расположенная в восточной части и на нижнем уровне храма Гроба Господня, всего в нескольких шагах от маленькой армянской часовни под названием «Придел разделения риз». Там же виден узкий вход, от которого постепенно расширяющаяся лестница спускается в просторный зал церкви.

В церкви два алтаря. Главный алтарь посвящен Святому Григорию, справа от него находится небольшой алтарь, посвященный Святому Иоанну Крестителю. Согласно армянской традиции, мощи Святого Иоанна были похоронены под этим маленьким алтарем Святым Григорием Просветителем во время его визита в Иерусалим в начале 4-го века.

Церковь богата большими и маленькими армянскими надписями, общее количество которых, по нашим подсчетам, достигает около шести десятков. 13 из них представляют собой регулярные надписи заглавными буквами (еркатагир), вырезанные на небольших хачкарах в разных частях церкви, которые в основном опубликованы и известны ученым. Остальные надписи в большинстве своем выполнены простым методом царапания. Самая старая датированная армянская надпись в этой часовне, по-видимому, представляет собой граффити, нацарапанное в 1451 году (см. 1), после чего мы обнаружили еще одну надпись, нацарапанную на внешней стороне купола в 1666 году неизвестным тер (= священником) Киракосом (см. 2).

В рамках данной статьи мы выборочно представляем 16 надписей из наиболее полных, оставляя остальные для будущего сборника проекта «Армянские надписи Святой Земли и Синая». Помимо представленных надписей, во

второй части статьи мы обсуждаем уже опубликованные три надписи с целью внесения в них некоторых поправок и дополнений.

REFERENCES

1. **Achařean H.**, T'urk'erēnē p'okhařeal bařerē Polsi hay zhoghovrdakan lezuin mēj hamematut'eamb Vani, Gharabaghi yew Nor Nakhijewani barbařnerun, "Lazarean chemaran arewelean lez'uats'", Moskua-Vagharshapat, 1902 (**In Armenian**).
2. **Achařean H.**, Hayots' andznanunneri bařaran, hat. 1, Yer., YePH hrat., 1942 (**In Armenian**).
3. **Achařean H.**, Hayots' andznanunneri bařaran, hat. 1, Yer., YePH hrat., 1946 (**In Armenian**).
4. **Aghoyean C. vrd. S.**, S. Yarut'ean tachari haykakan bazhinneru norogut'yun, "Sion", Yerusaghēm, 2018, N 3 (yulis-september), ēj 332-342 (**In Armenian**).
5. **Aghawnuni M. yeps.**, Miabank' yew ayt's'eluk' hay Yerusaghēmi, Yerusaghēm, tp. Srbots' Yakobeants', 1929 (**In Armenian**).
6. **Aghawnuni M. yeps.**, Haykakan hin vank'er yev yekeghets'iner Surb yerkrin mēj. usumnasirut'yunner, Yerusaghēm, Srbots' Yakobeants' hrat., 1931 (**In Armenian**).
7. Divan hay vimagrut'yan, prak VII, Ukraina, Moldova, kazmets' **Grigoryan G.**, Yer., HH GAA "Gitut'yun" hrat., 1996 (**In Armenian**).
8. **Hakobyan T'. Kh., Melik'-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bařaran, hat. 1, A-D, Yer., YePH hrat., 1986 (**In Armenian**).
9. **Hakobyan T'. Kh., Melik'-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bařaran, hat. 1, K-N, Yer., YePH hrat., 1991 (**In Armenian**).
10. **Harut'yunyan K.**, Hayrenakan mec paterazmum hagt'anaki patmakan nshanakut'yunē yev hay zhoghovrdi avandē hagt'anakum, "Lraber" has. git., Yer., 2020, N 1, ēj 13-39 (**In Armenian**).
11. **Harut'yunyan A. Ē.**, Izmayili hayeren vimagererē, nor gtaconer, "Vēm", Yer., 2019, N 4, ēj 182-195 (**In Armenian**).
12. Hay gagh't'ashkharhi patmut'yun (mijnadarits' mintchev 1920 t'.), hat. 1, Slavonakan ashkharhi yev Hyusisayin Kovkasi haykakan gaghut'nerē, khmb. HH GAA akad. **Mik'ayelyan V.**, Yer., 2003 (**In Armenian**).
13. Hayeren dzeřageri ZhĒ dari hishatakaranner (1601-1620 t't'.), hat. 1, kazmets'in **Hakobyan V., Hovhannisyan A.**, HSSH GA hrat., Yer., 1974 (**In Armenian**).
14. Hayeren dzeřageri ZhĒ dari hishatakaranner (1621-1640 t't'.), hat. 2, kazmets'in **Hakobyan V., Hovhannisyan A.**, HSSH GA hrat., Yer., 1978 (**In Armenian**).
15. Hayeren dzeřageri ZhĒ dari hishatakaranner (1641-1660 t't'.), hat. 3, kazmets' **Hakobyan V.**, HSSH GA hrat., Yer., 1984 (**In Armenian**).
16. **Palean T. vrd. T'alasats'i**, Surb yerkir. nkaragrut'iwn surb Yerusaghēmi yew srbazan tegheats', hat. 1, K. Polis, hrat. "Nshan K. Pērpērean", 1892 (**In Armenian**).
17. **Pogharean N. ark'yeps.**, Mayr ts'uts'ak dzeřagrats' Srbots' Yakobeants', hat. 11, Yerusaghēm, tp. Srbots' Yakobeants', 1991 (**In Armenian**).
18. **Savalaneants' T. H. T'.**, Patmut'iwn Yerusaghēmi, grabar bnagrēn ashkharhabari veratsets' **Nshanean M. yeps.**, hat. 1-2, Yerusaghēm, tp. Srbots' Yakobeants', 1931 (**In Armenian**).
19. **St'oun M. Ye., Harut'yunyan Kh. A.**, Yerusaghemi Surb Harut'yan tachari hayeren ardzanagrut'yunnerē. mas ařajin: Surb Hovhannes avetaranich' yekeghets'in yev nra ardzanagrut'yunnerē, "Vēm", Yer., 2020, N 2, ēj 159-177 (**In Armenian**).
20. **Yovhannēs Hannay vrd.**, Girk' patmut'ean srboy yew metsi k'aghak'is Astutsoy Yerusaghēmis yew srbots' t'norinakanats' tegheats' Teapn meroy Yisusi Qristosi, K. Polis, "Yovhannēsi yew Pōghosi" tp., 1782 (**In Armenian**).



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5




Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9




Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16



Նկ. 17



Նկ. 18




Նկ. 19ա



Նկ. 19բ



Նկ. 20ա



Նկ. 20բ



Նկ. 21ա



Նկ. 21բ